Հավելված 1
«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ Խորհրդի
02.09.2026թ. թիվ 2026/15 որոշման

Թողարկման վերջնական պայմաններ

02 սեպտեմբերի 2026թ.

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել Ծրագրային Ազդագիրը (գրանցված է 01 հուլիսի 2026թ.-ին ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 1/288 Ա որոշմամբ), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ում ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 10 հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ *(Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթերն են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)*		
1	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ
2	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր
3	Սերիան (տվյալ Ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	Սերիա 1, 2026
4	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	5,000,000,000 (Հինգ միլիարդ) ՀՀ դրամ Թողարկվող պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է չերաշխավորված եղանակով:
5	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Պարտատոմսերը ստորադաս չեն: Ամենայն մանրամասնությամբ ներկայացված է Ազդագրի 2.3.6 կետում
6	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ

7	Առաջարկի գինը	հաշվարվելու է հետևյալ կերպ՝ $$DP = CP + FV * \frac{C_t}{f} * \frac{A}{E}$$ $$CP = \frac{\mathrm{FV} * (C_t/f) * (1 - (1 + y/f)^{-N})}{(\mathrm{y}/f)} * \left(1 + \frac{y}{f}\right)^{1-\tau} + \frac{FV}{(1 + y/f)^N} * \left(1 + \frac{y}{f}\right)^{1-\tau} - FV * \frac{C_t}{f} * \frac{A}{E}$$ $$\tau = \frac{\mathrm{DSC}}{\mathrm{E}}$$ $$C_t = ReferenceRate_t + Spread$$ Որտեղ՝ FV-պարտատոմսի նվանական արժեքը, DP-պարտատոմսի ամբողջ գինը(ներառված կուտակված տոկոսագումարը), CP- պարտատոմսի մաքուր գինը (առանց կուտակված տոկոսագումարը), C_t-արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը(%), y- տարեկան եկամտաբերությունը(%), f-արժեկտրոնի վճարման պարբերականությունը (1-տարեկան, 2-կիսամյակային, 4- եռամսյակային, 12- ամսական) N-մինչև մարման ժամկետը մնացած արժեկտրոնների քանակը, E-տվյալ փուլի փաստացի տևողությունը օրերով, A-նախորդ արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրը, փաստացի օրերի թիվը, իսկ առաջին արժեկտրոնի վճարման դեպում՝ թողարկման օրից մինչև գործարքի կատարման օրը փաստացի օրերի թիվը, DSC - գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարման օրը, $ReferenceRate_t$-ուղենիշային տոկոսադրույք (%), Spread- սահմանված տոկոսադրույք (%), Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր օրվա համար հրապարակվում է Թողարկողի կայքում:
8	Անվանական արժեքը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
9	Քանակը	50,000 (Հիսուն հազար) հատ

10	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	2026թ. սեպտեմբերի 11
11	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	2026թ. նոյեմբերի 11 Անհրաժեշտության դեպքում ժամանակահատվածը կարող է երկարացվել Ընդ որում եթե պարտատոմսերը ամբողջությամբ տեղաբաշխվեն մինչ այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է հանդիսանում այն օրը, երբ վաճառվել է վերջին պարտատոմսը:
12	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	AMCUBIB21ER1
13	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ Խորհրդի 02.09.2026թ. թիվ 2026/15 որոշման «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ Խորհրդի 28.04.2026թ. թիվ 2026/08 որոշման
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	2026թ. սեպտեմբերի 11
15	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	**Տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը հաշվարկվելու է հիբրիդային եղանակով:** ա. Շրջանառության առաջին 6 ամիսների ընթացքում պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային հաստատագրված տոկոսադրույք, որը կազմում է **10.50%**: բ. Շրջանառության առաջին 6 ամիսների ավարտից հետո պարտատոսմերի համար կիրառվելու են տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք, մասնավորապես՝ Յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող աշխատանքային օրվա դրությամբ գործող ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը գումարելով Թողարկողի կողմից որոշված տոկոսադրույքը (spread)՝ **4.00%** Հաշվարկված տոկոսադրույքը կիրապարակվի Թողարկողի պաշտոնական ինտերտետային

		կայքում (www.cubeinvest.am)՝ էական փաստեր և տեղեկատվություններ պարունակող հաշվետվության տեսքով մինչև տվյալ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման օրվա ավարտը:
16	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	11/03/2027 11/09/2027 11/03/2028 11/09/2028 11/03/2029 11/09/2029
17	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
18	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ
19	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	- Պարտատոմսերի շրջանառության 6-րդ ամսվա ավարտից հետո Թողարկողը յուրաքանչյուր ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրը սահմանում է տարեկան նոր արժեկտրոնային տոկոսադրույք սույն վերջնական պայմանների 15-րդ կետով սահմանված կարգի համաձայն: - Եթե ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման հիմք է ընդունվում այդ օրվան նախորդող առաջին աշխատանքային օրը: - Հաշվարկված տոկոսադրույքը կլորացվում է ստորակետից հետո մինչև 2 (երկու) նիշի ճշտությամբ և կիրառվում է հաջորդող կիսամյակի ընթացքում՝ պարտատոմսերի գնի հաշվարկման և տվյալ կիսամյակային արժեկտրոնի վճարման ժամանակ: - Յուրաքանչյուր ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրը հաշվարկված տոկոսադրույքը կհրապարակվի Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում (www.cubeinvest.am)՝ էական փաստեր և տեղեկություններ պարունակող հաշվետվության տեսքով մինչև տվյալ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման օրվա ավարտը: Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ կողմից ցուցակման վերաբերյալ դրական եզրակացության

		առկայության դեպքում նշված հաշվետվությունները որպես էական փաստեր և տեղեկություններ կուղարկվեն նաև Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ: - Սույն կետի իմաստով կիսամյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 6 (վեց) ամիսը:
20	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21	Մարման ժամկետը	2029թ. սեպտեմբերի 11
22	Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
23	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	ոչ կիրառելի
24	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	4) Այլ տեղեկություններ	
25	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10
27	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն Ազդագրում)	ոչ կիրառելի
Այլ տեղեկություններ		
28	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրի թույլտվության	Արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտրի

	առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	
29	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:
30	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն
31	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբան և/կամ ֆիզիկական անձիք վճարումը կատարում են թողարկման նպատակով բացված՝ Էվոկաբանկ ԲԲԸ 1660030016400900, Ամերիաբանկ ՓԲԸ 1570025547625500, Արդշինբանկ ԲԲԸ 2470072930190239 հաշվեհամարներից որևէ մեկին: Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողը վճարումը պետք է կատարի մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա 16:30-ն՝ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման հիմքով: Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար : Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են Ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Ստորագրող անձինք՝

Արսեն Կատվալյան	Խորհրդի նախագահ		02.09.2026
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Հայկ Մկրտչյան	Խորհրդի անդամ		02.09.2026
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Ռոբերտ Պետրոսյան	Խորհրդի անդամ		02.09.2026
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Միքայել Մարգարյան	Գլխավոր տնօրեն - Տնօրինության նախագահ		02.09.2026
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արմեն Տեր-Հակոբյան	Գանձապետ - Տնօրինության անդամ		
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Կարինե Քոչարյան	Ադմինիստրատիվ տնօրեն - Տնօրինության անդամ		02.09.2026
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Շուշան Հարությունյան	Գործառնական վարչության պետ - Տնօրինության անդամ		02.09.2026
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Անուշ Մարտիրոսյան	Ռիսկերի կառավարման և Համապատասխանության վարչության պետ- Տնօրինության անդամ		02.09.2026
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արմեն Ազիզյան	Գլխավոր հաշվապահ		02.09.2026
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ

Ստորագրությունները հավաստում եմ՝

Միքայել Մարգարյան	Գլխավոր տնօրեն - Տնօրինության նախագահ		02.09.2026
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ